ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1955 Общественные науки

Վ. Պարտիզուցի

«ԱՆԴՐԵԱՍ ԵՐԵՑ» ՎԻՊԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Մուրացանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

Պատմությունը պետք է սովորեցնի մեզ «դեն ձգել մեզանից հուսահատությունը և շարունակ մեր անշարժությունը դատապարտող հոռետեսությունը և խրախուսվել լավագույն մարդկանց փառավոր օրինակներով»։ Պատմությունը պետք է մեզ ցույց տա «ներկայի համար նրանից օգտվելու ճանապարհը»։

Այսպես էր հասկանում Մուրացանը պատմությունը և այդ նպատակով գրեց պատմական թեմայով իր երկերը, դրանց մեջ արծարծելով ժամանակակիցներին հուզող բազմաթիվ հարցեր։ Նա տակավին աշակերտական տարիներին բանաստեղծություն է նվիրել Դավիթ բեկի՝ օտարերկրյա լծի դեմ մղած ազատագրական շարժմանը։

Բնորոշ է, որ Մուրացանը «Գևորգ Մարզպետունի» և «Անդրեաս երեց» երկերը գրեց 1895 թվականի հայկական ջարդերի առիթով։ Բռնակալական Թյուրքիան 90-ական թվականներին սկսեց «հայկական հարցը» հայերին բնաջնջելու միջոցով լուծելու եղեռնական պլանի իրագործումը։ Նա արյան մեջ խեղդելով սասունցիների 1894 թվականի ազատագրական շարժումը, 1895 թվականին սկսեց հայերի ավելի մեծ մասշտաբի ջարդը։ Այդ տարիներին թյուրքական յաթաղանի զոհ գնաց ավելի քան երեք հարյուր հազար հայ։

Ժողովրդի ապրած այդ ծանր ողբերգությունը խորապես հուզել է մեր գրականության լավագույն ներկայացուցիչներին՝ Թումանյանին, Րաֆֆուն, Հովհաննիսյանին, Մուրացանին և մյուսներին։ Դեմոկրատ բանաստեղծ Ալ. Ծատուրյանը Սասունի դեպքերին նվիրած իր բանաստեղծության մեջ «Որդեկորույս» հայ մայրերին հորդորում է չարտասվել կռվում ընկած իրենց որդիների համար, որովհետև հայրենիքի համար ընդունած մահը հավասար է հավերժ փառքի ու անմահության։ Հայկական ջարդերի արձագանքներ են Հովհաննիսյանի բազմաթիվ բանաստեղծությունները («Մի վհատիր, եթե ավեր», «Բացվեցավ գարուն», «Հեզիկ կարկաչով վազում են ալիք», «Գարուն», «Ագռ օրեր», «Եվ եկավ գարուն և անցավ ձմեռ», «Նոր գարուն» և այլն), որոնց մեջ նա պատկերում է արևմտահայերի ծանր, օրհասական վիճակը և երգում մեր ժողովրդի «ահագին վիշտն» ու «տանջանքի օրհներգը»։

Կարելի է շատ օրինակներ բերել և՛ պոեզիայի և՛ արձակի մյուս նշանավոր դեմքերի ստեղծագործություններից։ Մուրացանը ևս, իբրև ժողովրդին ջերմորեն սիրող հեղինակ, որ «ամեն մի գործ ստեղծելու ժամանակ», «աչքի առաջ ունեցել է հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան», իր բուռն բողոքի ձայնն է բարձրացրել ժողովրդին հասած այդ ծանր ողբերգության առթիվ։

1894 թվականին գրած մի նամակում նա իր խորը զայրույթն է հայտնել «օսմանյան կառավարության բարբարոս կարգադրությանց դեմ» և դատապար-

տել «Սասունում կոտորված» ժողովրդի հիշատակի նկատմամբ հայկական որոշ շրջանների ցուցաբերած անտարբերությունը։

Մուրացանը մի շարք հոդվածներում և արձակ ու չափածո երկերում անարգանքի սյունին է գամել թյուրքական արյունոտ բռնակալությունը, միաժամանակ երգել հայ ժողովրդի՝ այդ բռնակալության դեմ մղած հերոսամարտերը։ Մուրացանն այդ արել է և՛ ժամանակակից և՛ պատմական թեմայով գրված գործերում։ 1895 թվականին, հայկական կոտորածի ծանր օրերին, նա գրել է Սասունի հերոսական ժողովրդի ապստամբությանը նվիրված «Ինչպե՞ս էին մեռնում» պոեմը։ Հերոսական ոգով համակող այդ պոեմում երգված է Սասունի աշխատավոր և խաղաղասեր ժողովրդի պայքարը թյուրքական բռնակալության դեմ։ Քաջ սասունցին սարալանջի մամռուտ ժայռին հենված, հսկում է կիրճի մուտքին, որտեղով պետք է մտնի թշնամին։ Նա արդար վաստակով ապրող և բռնակալության դեմ ընդվզող հայ աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչն է, որ իր բազկով «առյուծ կրվանի».

Բայց այդ բազկով նա ապիրատ
Ոչ ոք չէ տեսել յուր կյանքում,
Թեպետ ապրել անկախ, ազատ,
Ուայռ և տքնել է անդադրում։

Խաղաղ աշխատանքի այդ ներկայացուցիչը, սակայն, անողոք ու անզիջում է հայրենիքի թշնամիների նկատմամբ։ Նա, «արիութեամբ լի և գիտակ իւր իրաւանց ու պարտուց», իմանալով, որ ընկերները ընկել են կռվում, մեն մենակ խիզախում է թվով գերազանց թշնամիների դեմ և ընկնում «փառահեղ մահվամբ» ու «անպարտելի հոգով»։

Ինչպես ասել ենք, հայրենիքի թշնամիների դեմ մղած կռիվների օրինակներով ժողովրդին խանդավառելու նպատակն է հետապնդել Մուրացանը նաև պատմական թեմատիկայով գրված երկերում։

Պատմական անցյալի իրադարձությունները դարձնելով գեղարվեստական երկերի նյութ, Մուրացանն արտահայտում է իր ջերմ սերը հայրենիքի նկատմամբ և արձագանքում ժամանակի հուզող հարցերին, մասնավորաբար հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին։ Հայտնի է, որ ժողովուրդը պատմության հերոսական դրվագների մեջ տեսնում է իր կենսունակության և ուժի ապացույցներ. հերոսական պատմությունը նրան մղում է նոր սխրագործությունների և, ընդհակառակը, իրենց դարն ապրած դասակարգերը կամ կեղծում են պատմությունը, կամ հրաժարվում նրանից։

«Անդրեաս հրեց» վիպակի նյութը մեր ժողովրդի պատմության 17-րդ դարի առաջին քսանամյակի՝ իրադարձություններով հարուստ շրջանն է։ Պարսկաստանի և Թյուրքիայի միջև մղվող երկարատև պատերազմների թատերարեմ դարձած, ավերված և ծայրահեղ աղքատության հասցված Հայաստանը 16-րդ դարի վերջին քառորդին գրեթե ամբողջապես անցել էր օսմանյան Թյուրքիայի տիրապետության տակ։

«Օսմանցի կուսակալներն ազատ զգալով իրենց պարսից կողմից գալիք վտանգներից,— գրում է Մուրացանը,— սկսան ծանր և անտանելի հարկերով նեղել և տանջել հայ ժողովուրդը, որն արդեն բազմամյա հարստահարություններից վերջին աղքատության էր հասել»[1]։

[1] Մուրացան, Երկասիրություններ, հատոր 2, էջ 131—132։

Դարի վերջերին ուժեղացած ներքին խռովությունները և «ջելալիների ապստամբությունները» թուլացրել էին Թյուրքիան, մյուս կողմից էլ Պարսկաստանում 1587 թվականից գահ բարձրացած Շահ-Աբբասը կարողացել էր բավական ամրապնդել պետությունը և ուժեղ բռունցք ստեղծել Թյուրքիայի դեմ։ 1603 թվականին սկսելով իր առաջին արշավանքը՝ Շահ-Աբբասը, ի թիվս այլ քաղաքների, գրավում է Թավրիզը, Զուղան, Նախիջևանը և պաշարում Երևանը։ Ավելի քան ութ ամիս թյուրքական և պարսկական բանակները կռվում են Երևանի բերդի համար։ Շահ-Աբբաս ահավորագույն բռնակալը դիմել էր դաժան մի միջոցի — թշնամու կրակի տակ խրամատներ փորելը ինչպես և պատերազմական մյուս կառուցումները նա անում էր հայերի ուժով, իսկ հարձակումների ժամանակ հայերին քշում էր զորքի առջևից։

Երևանի պաշարման ժամանակ Շահ-Աբբասը արշավանք կազմակերպեց ու ասպատակեց Հայաստանի շրջանները՝ Շիրակ, Մուշ, Կարին, Վասպուրական և ավելի քան քսան հազար հայերի տեղահանեց ու կենտրոնացրեց Արարատյան դաշտում։ Ըստ որում այդ ասպատակությունների ժամանակ զինվորներին թույլատրված էր ամեն բան՝ ավերել, քանդել, թալանել, գերեվարել նաև կանանց ու երեխաներին։ 1604 թվականի ամռանը Երևանի բերդը հանձնվեց։ Դրանից հետո Շահ-Աբբասը ձեռնարկեց արշավանք դեպի Ղարս, շուտով, սակայն, իմանալով, որ օսմանյան զորաբանակները դուրս են եկել Էրզրումից ու շարժվում են դեպի առաջ, նա որոշեց նահանջել։ Նահանջից առաջ նա սկսեց հայ ժողովրդի մասսայական տեղահանությունը և գերեվարումը դեպի Պարսկաստան։ Շահ-Աբբասի կազմած այս պլանի իրագործումը հարյուր հազարավոր զոհերի պատճառ դարձավ։ Գաղթեցվում էր մոտ 350 հազար բնակչություն, որի ողջ անշարժ գույքը, անասունները և այլն, հրդեհում, ոչնչացնում էին։ Շահ-Աբբասը, ի թիվս այլ նպատակների, այդ ամենով ցանկանում էր Արևելյան Հայաստանը Իրանի թշնամիների համար անապատային գոտի դարձնել։

Թյուրքական բանակի հետապնդումից ազատվելու համար Շահ-Աբբասը հայ ժողովրդին քշում էր մոտ հազար կիլոմետր երկրի խորքը առանց տրանսպորտի, նախապատրաստական միջոցների, միայն բարբարոսական միջոցներով։ Սպանում, սրածում էին դանդաղողին, հիվանդին, թրատում էին երեխային, որպեսզի մոր բեռը թեթևանա և արագ առաջ գնա։ Մահվան սպառնալիքի տակ վարարած Արաքս գետը լցված բազմության զգալի մասը խեղդվեց։ «Առջևը ջուր, հետևը սուր» — գրել է ժամանակի պատմիչը։ Գետն անցնողների մի մասն էլ զոհ գնաց ճանապարհի դժվարություններին ու պարսկական զինվորականների դաժանություններին։ Պատմիչ Առաքել Դավրիժեցին ասում է, որ ավելի բան կեսը խեղդվեց Արաքս գետում կամ մեռավ գերեվարության ճանապարհին։

Այս բոլորին հետևեց 1606—1610 թվականների՝ մեծ մասշտաբի սովը, որից ամենից շատ տուժեց մշտական պատերազմների թատերաբեմ հանդիսացող Հայաստանի աղքատ ու տառապած ժողովուրդը։

Չնայած Շահ-Աբբասի գործադրած բարբարոսական միջոցներին, ժողովուրդը չէր ցանկանում թողնել իր հայրենիքը, տունն ու տեղը և դիմում էր փախուստի։ Մեծ տեղահանությունից հետո քարայրներից և այլ թաքստոցներից մեծաքանակ բնակչություն հավաքվեց Հայաստանում։ Սակայն սրանք էլ շարունակում էին տնքալ Շահ-Աբբասի դաժան լծի տակ։ Բազմատեսակ ու ծանր

հարկերը, հաճախակի կրկնվող պատերազմները Թյուրքիայի և Իրանի միջև, երկրում ստեղծել էին խիստ ծանր վիճակ։

1617 թվականին Երևանից վերադառնալիս Շահ-Աբբասը ձեռնարկում է մի «այցելություն» դեպի Ագուլիս։ Այդ «այցելության» և դրա հետ կապված դեպքերի նկարագրությանն էլ նվիրված է «Անդրեաս երից» վիպակը։

Սյուժեին անցնելուց առաջ Մուրացանը գրել է մի գլուխ՝ «Նախադրություն», որի մեջ նկարագրել է Հայաստանի վիճակը 1600—1617 թվականներին։ Այդ նկարագրության նպատակն է՝ ընթերցողին ծանոթացնել պատկերվող ժամանակաշրջանի հետ, նախապատրաստել նրան հետագա դեպքերը ճիշտ հասկանալու համար։ Թեև վիպակի վրա գրված է 1617 թվական, սակայն «նախադրությունից» բացի բուն վիպակում էլ, տարբեր առիթներով, Մուրացանն անդրադառնում է 1617 թվականին նախորդած ժամանակաշրջանին։ Այնպես որ վիպակում, փաստորեն, պատկերված է 17-րդ դարի առաջին քսանամյակի կյանքը։ Նախադրության մեջ հեղինակը խոսում է Շահ-Աբբասի տիրապետության կործանարար հետևանքների մասին։ Հայ ժողովուրդը «ծանր և անտանելի հարկերից» և «բազմամյա հարստահարություններից» վերջին աղքատության էր հասել, ասում է Մուրացանը, իսկ սկսված սովը «ավեր ու ապականություն սփռեց ամբողջ Հայաստանի վրա»։ Սովից հետո ժանտախտն է սկսում ճարակել և բազմաթիվ զոհեր տանել։

Հայաստանի համար ծանր այդ ժամանակաշրջանում, ցանկանալով օգտվել ստեղծված վիճակից, եվրոպական գաղութարար պետությունների և Հռոմի պապի գործակալ կաթոլիկ միսիոնարները սկսում են պառակտել ժողովրդին դավանաբանական վեճերով։ Այդ բոլորին ավելանում են ժամանակի մի քանի կաթողիկոսների կազմակերպած «ներքին խռովություններն ու պառակտումները»։

Մուրացանն իր վիպակում ուշադրություն է դարձրել բոլոր այդ հարցերի վրա, դրա համար վիպակը գրելուց առաջ նա գիտնականի ջանասիրությամբ ուսումնասիրել է նկարագրվող շրջանի Հայաստանի, Պարսկաստանի և Թյուրքիայի տնտեսական-քաղաքական կյանքը։ Նկարագրելով, թե ինչպես Հայաստանը դարձել է պարսկական և օսմանյան գահակալների համար կռվախնձոր, Մուրացանն ավելացնում է. «Չնայելով որ նա (Հայաստանը — Վ. Պ.) բաժանված էր արդեն երկուսի մեջ, այսուամենայնիվ նրանցից ամեն մինը «սահման բաջաց, դենը իրեանց» հին առածին հետևելով՝ խլում էր մյուսից նրա տիրապետած դավառները, երբ այդ իրա համար հաճելի կամ հնարավոր էր լինում։ Եվ այդ անում էր ոչ թե կանոնավոր պատերազմ մղելով յուր հակառակորդի դեմ, այլ ավեր և ապականություն սփռելով ընդհանուր երկրի մեջ, քաղաքներն ու գյուղերը բանդելով, բնակարանները կողոպտելով և հրդեհելով, ժողովուրդը կոտորելով կամ գերի վարելով։ Եվ այս բոլորի համար տուժում էր Հայաստանի սպարախտ ժողովուրդն, թե՛ արևելյան և թե՛ արևմտյան մասերում։ Մանավանդ այն պատճառավ, որ երկու կողմից կռվող հակառակորդները, թյուրք թե պարսիկ, մանավանդ բերդեր ու ամրոցներ պաշարելու կամ առնելու ժամանակ մեծ մասամբ հայ գինվորներ էին հավաքում իրար դեմ կանգնեցնում, ստիպելով խեղճերին, որ եղբայրները եղբայրներին կոտորեն»[1]։

Վիպակում ռեալիստական վառ գույներով է պատկերված պարսկական

[1] Մուրացան, Երկասիրություններ, հատոր 2, էջ 141։

տիրապետության դժոխքը։ Վիպակի բուն գործողությունն սկսվում է մանկաժողով անելու նպատակով. Շահ-Աբբասի Ագուլիս գալու նկարագրությամբ։ Մանկաժողովը, ասում է Մուրացանը, «մի գարշելի հարկի տեսակն էր պարսիկ տիրապետներից սահմանված։ Նրանք իրենց հպատակներից դրամով և թանկագին իրերով հարկ ժողովելուց զատ՝ խլում էին նրանցից և գեղեցիկ աղջիկներ ու մանկահասակ սիրունատես տղաներին և ուղարկում իրանց հարեմները»[1]։

Շահ-Աբբասի՝ Ագուլիս գալու և մանկաժողովի լուրերը սարսափով են լցնում ժողովրդի սիրտը։ Մանկաժողովը, ասում է վիպակի հերոս Անդրեասը, ամեն մի ագուլեցու տուն լաց ու կոծով պիտի լցնի։ Ժողովրդի մեջ սկսվում է խմորում, հանդես են գալիս համակերպման, ստրկական հնազանդության կողմնակիցներ և հայրենասիր ու խիզախ մարդիկ, որոնք պնդում են, թե պետք չէ ստրկորեն կատարել շահի հրամանը, անհրաժեշտ է թաքցնել գեղեցիկ աղջիկներին ու տղաներին։ Վերջին խմբակցության գլխավորը ուսուցիչ Անդրեասն է։ «Շահը,— ասում է նա,— հրամայում է, որ մեր բոլոր գեղեցիկները հաննենք յուր առջևը, որպեսզի նրանց միջից ընտրե յուր սպանդանոցին հարմար զոհեր. մենք ինչո՞ւ պետք է այդ անարդար ու գարշելի հրամանը կատարենք կուրորեն...»[2]։ Նա առաջարկում է թաքցնել գեղեցիկներին. ինքն անձամբ նախապատրաստել է իր աշակերտներին թաքցնելու գործը։ Անդրեասը, սակայն, ունի նաև ավելի մեծ պլան։ Նա պաշտպանում է այն տեսակետը, թե պետք չէ հնազանդվել բռնակալական լծին, անհրաժեշտ է նաև դիմադրել, նախապատրաստել այդ լծի տապալումը։

Ծերուկ ժամավորի այն խոսքին, թե ի՞նչ կարող ենք անել բռնավորի լծի տակ, Անդրեասը պատասխանում է. «Հայրիկ, մի՞թե բռնավորը մարդ չէ. մսից ու արյունից չէ՞ շինված. ինչո՞ւ նա կարող է սպանել, իսկ մենք՝ ոչ։ Մի՞թե նա սուրը ձեռին է ծնվել, իսկ մենք շղթայակա՞պ... Զանազանությունը մեր և նրա մեջ ա՛յն է, որ նա շարունակ բռնաբարում ու կեղեքում է, իսկ մենք հնազանդում ենք։ Բայց եթե միանգամ սովորեինք մահից չվախենալ, եթե որոշեինք միշ-միշ մեռնելու փոխարեն՝ միանգամից մեռնել, այն ժամանակ շատ բան միանգամից կփոխվեր»[3]։

Անդրեասն այն միտքն է զարգացնում, թե հայրենիքը կարելի է փրկել ժողովրդի անձնազոհ պայքարով։ Հայրենիքի փրկությունը զոհեր է պահանջում, և այդ զոհերը պետք է տալ։ «Մինչև որ չզոհենք, արդյունաբերել չենք կարող»,— ասում է նա։ Այսինքն Մուրացանը պաշտպանում է իր՝ այնքան սիրած ու քարոզած անձնուրացության և անձնազոհության մորալը։ Ըստ որում Անդրեասը չմտածված ու չնախապատրաստված ապստամբության կոչ չէ որ անում է, «մահ հանուն մահվան» սկզբունքը նա անիմաստ է համարում, նա չի պնդում, թե վաղն ևեթ պետք է դուրս գալ հզոր Շահ-Աբբասի դեմ։ Իր միտքը նա այլաբանորեն հետևյալ կերպ է շարադրում. «Ի՞նչ օգուտ թաղել ցորենը հողում այնպիսի ժամանակ՝ երբ կատաղի հեղեղը ողողում է երկիրը և ցանքսերը քշում...։ Ես միայն ցանկանում եմ, որ արթուն լինինք. աշնան խաղաղ օրերում գետինը հերկենք, իսկ գարնան հալոցին՝ սերմերը ցանենք։ Այնուհետև կհասնե ամառը

[1] Մուրացան, Երկասիրություններ, հատոր 2, էջ 147—148։

[2] Նույն տեղում, էջ 224։ Այս և հետագա բոլոր ընդգծումները (երբ վերապահում չի արվում) մերն են, Վ. Պ.

[3] Նույն տեղում, էջ 180։

ԱՍՀ - 2545

և արտերը կծածկվին հասկերով...։ Եթե մեր հայրերը ցանած լինեին, այսօր մենք կհնձեինք։ Ջղանդաղենք, ուրեմն, նրանց պես, որպեսզի մեր որդվոց ու թոռանց անեծքին չարժանանանք»[1]։ Անդրեասին կատաղի կերպով հակառակում է կաթողիկոսի կողմնակից առաջնորդ վարդապետը, այն կաթողիկոսի, որի «պաշտոնակալները ծառայում էին վարձատրության համար և գործում ի շահ անձնական դյուրության»։

Ստրկահոգի և մորթապաշտ, մեծավորի ստվերի առաջ ծունր դնող առաջնորդը, որ վախենում է, թե որևէ զանցառության համար ինքը կարող է պատիժ կրել շահից, աստծուց խնդրում է «արեգակնափայլ» շահի աթոռը «անսասան պահել հավիտյան»։ Տեր Անդրեասը, որ մանկությունից ի վեր հայտնի է իր համեստությամբ, ժողովրդի համար ճակատագրական այդ իրադարձության հանդեպ լցվում է անսահման զայրույթով, նա ասում է, որ այսպիսի ժամանակ հասարակական բարիքը թողած «անձնական խնդրով» զբաղվելը դավաճանություն է։ Նա իրեն մեղադրելու և դատելու համար կանչած վարդապետին ասում է, որ ի ն ք ն իր ժողովրդի կողմից հանդես է գալիս իբրև «դատախազ»։ Այն ժողովրդի, «որի առաջ այս վայրկենին բացված է փորձության անդունդ, որ սպառնում է նրան կլանել յուր մեջ... Ես պահանջում եմ, որ այդ անդունդը փակելու վրա մտածեք. իսկ դուք ի՞նչ եք պատասխանում, կամ ի՞նչ հրամայում։ Միթե իրավունք ունի՞մ ես լռել, կամ դուք ինձանից կարո՞ղ եք լռություն պահանջել։ Պատերազմի ժամանակ ամեն մի քաջ զինվոր իրավունք ունի նախատել և, մինչև անգամ, ի մահ հարվածել յուր հրամանատարին, եթե սա քաջապես կռվելու և զորքին արիություն ու կորով ներշնչելու փոխարեն՝ ծակամուտ է լինում, կամ յուր անձի վրա մտածում»[2]։

Անդրեասը պահանջում է հարգել մարդու կոչումը, չլինել կորամեջք և ստրկահոգի, վերջիններս, ասում է նա, լավ չեն անասունից։ Պարսիկ բարբարոսների հրամանները ճշտությամբ կատարելը մարդկանց դնում է անասունի վիճակում. «Նրանք սովորել են նայել մեզ վրա իբրև անասունների վրա. ուստի և շարունակ կթում են մեր կաթը՝ ստինքներնիս ցամաքեցնելու չափով. դնում են մեր վզին արորի ծանր լուծը և հողի փոխարեն հերկել տալիս մեզ առապարներ. բարձում են մեր մեջքին դժվարատար բեռներ և վարում մեզ դեպի լեռնալանջերը, և իվերջո, երբ քաղցենում են՝ անգթարար մորթոտում և ուտում են մեզ...»[3]։

Անդրեասը զայրույթով հերքում է այն մտայնությունը, թե այդ բոլորը աստծու ստեղծած կարգն է, և մանկաժողովը համարում է «մի գարշելի, մի դազանային պահանջ»։

Հայ գրականության պատմության մեջ խիզախ և աննկուն Անդրեասը համարվել է «ֆառաջավոր Ադասի»[4]։ Այս համեմատության մեջ, մի կողմ թողնելով շատ տարբերություններ, իսկապես կա ճշմարտություն. և՛ Ադասու, և՛ Անդրեասի համար կարևորը ժողովրդի շահերի համար արտաքին նվաճողների դեմ ըմբոստանալն է, անսահման ատելությունը ստրկության ու օտարերկրյա նվաճողի դեմ։

Ի դեպ, աղքատ ծնողների զավակ է Անդրեասը, նրա ծնողները խուսափել

[1] Մուրացան, Երկասիրություններ, հատոր 2, էջ 180—181։
[2] Նույն տեղում, էջ 217—218։
[3] Նույն տեղում, էջ 224։
[4] Ա. Տերտերյան, Մուրացանը որպես մտածող և դեղադետ («Շողեր» ժողովածու)։

են Շահ-Աբբասի կազմակերպած գերեվարությունից և վերադարձել իրենց տունը։ Սակայն ո՞րն է Անդրեասի կրոնական սքեմ հագնելու, նրա ֆարաջսավոր լինելու պատճառը։ Մուրացանը դա բացատրել է ժամանակի պայմաններով. «Որովհետև այդ ժամանակ հայ ազգը կորցրել էր ամեն ինչ, և՛ թագ, և՛ գահ, և՛ իշխանապետություն... և յուր թշվառ դոյությունը պահպանելու համար՝ կրում էր գերության և ստրկության անարգ լուծը, ուստի հայրենասեր գործիչներին մնում էր միայն հագնել հոգևորականի սքեմ, ստանձնել քարոզչի և ուսուցանողի պաշտոն և մտնելով ժողովրդի մեջ՝ գաղտուկ դարմանել այն ցավերը, որոնց անկարելի էր սպեղանի դնել հայտնապես։ Վասն զի ժամանակակից բռնությունը, որ չէր պատկառում ոչ մի սրբությունից, գոնե կրոնական սքեմին չէր խանգարում ուսուցանել»[1]։

Այս ամենը նկատի ունենալով հանդերձ, անհրաժեշտ է նշել, որ Մուրացանը վիպակում, առհասարակ, գերագնահատել է հոգևորականների և եկեղեցու դերը («Հարանց անապատը» և նրա գործիչները)։

Ճիշտ կերպով դիտելով, որ կաթոլիկ քարոզիչները փաստորեն հանդիսանում էին եվրոպական գաղութարար պետությունների ու Հռոմի պապի գործակալները և քննադատելով նրանց «մարդորսության» զզվելի մեթոդները (այդ մասին Մուրացանը գրել է նաև մի քանի ուրիշ գեղարվեստական ու հրապարակախոսական գործերում), Մուրացանը, սակայն, արտահայտում է պահպանողական, երբեմն նույնիսկ ռեակցիոն հայացքներ, գովերգում է լուսավորչական եկեղեցին։ Այդ տեսակետից՝ նա տեղ-տեղ Անդրեասի անձնազոհության մեջ շատ է ընդգծում կրոնական հավատի խնդիրը։ Մեզ համար, սակայն, արժեքավորը Մուրացանի արած խիստ մերկացումներն են, Շահ-Աբբասի ստեղծած դժոխքի քննադատությունը և ժողովրդի շահերի պաշտպանությունը։

Վիպակում նկարագրվում է Շահ-Աբբասի մուտքը Ագուլիս։ Նրան ճոխ ու փարթամ դիմավորելու, նրա սիրտը «կակղացնելու» համար գրեթե ոչինչ չի խնայված։ Բացի թանկագին ընծաներից, ժողովուրդը մեծ թափորով դուրս է եկել ահավոր բռնակալին դիմավորելու։ Մուրացանը մեծ գրողին հատուկ ձևով, պատմաբանի հմտության հետ միացնելով արվեստագետի տաղանդը, ստեղծել է դարի կոլորիտը։ Այս և վիպակի ուրիշ շատ տեսարաններում հեղինակին հաջողվել է ընթերցողին մտքով փոխադրել իր նկարագրած ժամանակաշրջանը։ Մի բանի գեղեցիկ տեսարաններով, երբեմն էլ «մի քանի տարով դեպի անցյալը վերադառնալով», Մուրացանը ցույց է տալիս այն, ինչի մասին խոսել է «Նախադրության» մեջ։ Խոսքը պարսկական տիրապետության դժոխքի մասին է։ Այդպիսի մի տեսարան էլ Մուրացանը նկարագրել է Շահ-Աբբասին դիմավորելու հանդեսի ժամանակ։ Դաժանագույն արքան խոսակցության ժամանակ հիշում է 12 տարի առաջ կատարած իր «այցելությունը» Ջուղային և իրեն տրված ճոխ հյուրասիրությունն ու առատ նվերները։ Հիշում է և իր հյուրընկալին՝ Խոջա Խաչիկին, որ «Երասխի ափից մինչև յուր տունը մետաքսի ակնիվ փիանդազ էր փռել» նրա ոտքերի տակ[2]։

«Տեսնո՞ւմ եք,—ասում է նենգամիտ Շահ-Աբբասը,— ես չեմ մոռանում իմ լավ հպատակի արժանավոր գործը»։ Ապա նա ակամա հետաքրքրությամբ

[1] Մուրացան. Երկասիրություններ. հատ. 2. էջ 153։

[2] Այդ մասին մանրամասն խոսում է ժամանակի պատմիչ Առաքել Դավրիժեցին իր «Պատմութեան» մեջ (Վաղարշապատ, 1884 թ., էջ 16 և ուրիշ.)։

հարցնում է, թե ինչ եղավ իր հյուրընկալի վախճանը։ «Խոջա Խաչիկը,— պատմում են նրան,— խեղդվեցավ Ծրասխում այն տարին, երբ քո մեծափառության հրամանով հայերը քշվեցան Պարսկաստան։ Քշող վերակացուներից մինը երկաթե գավազանով հրել էր նրան դեպի գետը այն ժամանակ, երբ խոջան կամենում է եղել ազատել յուր տասներկու տարեկան աղջկան, որին, գետից անցնելու պատրվակով, առևանգում է եղել մի զորական»։— Թող աստված լուսավորե նրա հոգին», ասում է շահը «անտարբերությամբ» [1]։

Այս զրույցի ժամանակ ընթերցողը վերհիշում է հայերի տեղահանության հետ կապված ողջ սարսափները, պարսկական բռնակալության ցնցող պատկերը։ Արյունոտ այդ բռնակալությունից ազատ չէ նույնիսկ շահի հյուրընկալը։ Միաժամանակ այդ զրույցի մեջ երևում է դաժան ու նենգ բռնակալի բնավորության ամբողջ ստորությունը։ Մի պահ միայն հիշողություններին տրված, հաջորդ վայրկենին նա անսրտությամբ լսում է իր հրամանով իրագործված եղեռնագործությունների հազարավոր օրինակներից մեկի մասին։

1617 թվականի ընդունելության ժամանակ ամեն ինչ արված է, որպեսզի շահը «բարի աչքով» նայի ժողովրդին, սակայն գտնվում է նրա չար ու դաժան բնավորությունը գրգռող առիթ,— Անդրեասի աշակերտների գլուխները սափրած են և վարակած գոնջ հիվանդությամբ։ Անդրեասը, վախենալով առաջնորդի սպառնալիքներից ու մատնությունից, չէր կարողացել աշակերտներին թաքցնել, բայց աշակերտների ծնողները կազմակերպել էին երեխաների գլուխները սափրելու և արհեստական գոնջ առաջացնելու գործը, որպեսզի աշակերտները տգեղ երևային և չհափշտակվեին շահի հարեմի համար։ Շահ-Աբբասը հանձնարարում է ստուգել իր կասկածները՝ արդյո՞ք դիտմամբ չէ այդպես արված։ Եվ հանդիսավոր դիմավորման ժամանակ իսկ սկսվում են հարցաքննությունները։ Սարսափը պատում է բոլորին, սակայն Անդրեասը, որ բնավ չի մասնակցել գոնջ առաջացնելու գործին, համարձակ առաջ է գալիս և իր վրա վերցնում «հանցանքը»։ Հզոր ու արյունակզակ Շահ-Աբբասը, որի յուրաքանչյուր խոսքին հետևում է գլխատում, գազազած հրամայում է Անդրեասին՝ հայտնել գործակիցների անունները։ Անդրեասը ոչ միայն հրաժարվում է, այլև շահին, նրա շքախմբին ու ժողովրդին զարմացնում է իր աներկյուղ բնավորությամբ։ Նա Շահ-Աբբասին «ամբարիշտ» է անվանում, իսկ նրա համար կատարվող մանկաժողովը՝ «պատուհաս»։ «Եվ գիտցիր, ո՛վ արքա,— ասում է նա,— որ չկա աշխարհում ավելի մեծ պատուհաս՝ քան հնազանդիլը բռնավորին, որ ստիպում է մարդկանց ստել, կեղծել և խորամանկել՝ բռնության զրկանքներից ազատվելու համար...» [2]։

Անդրեասը նետվում է զնդան, ապա սկսվում են կտտանքները, խոշտանգումներն ու հարցաքննությունները, որպեսզի նա հայտնի «հանցավորների»— երեխաների գլուխները գոնջով վարակած մարդկանց անունները կամ մահմեդականություն ընդունի և արժանանա մեծամեծ պարգևների։ Անդրեասը հերոսաբար կրում է բոլոր տանջանքները։ Նրա ուժի հիմնական աղբյուրը ժողովրդի՝ իր նկատմամբ ունեցած հավատն ու սերն է, այն, որ ժողովուրդն ապրում է իր վշտերով, որ դահիճների հարվածները իր մարմնին ցավ պատճառելուց առաջ «մորմոքում ու կսկծեցնում են» հայ մարդկանց սրտերը։ «Նա մխիթարվում էր

[1] Մուրացան, Երկասիրություններ, հատ. 2, էջ 274—275։
[2] Նույն տեղում, էջ 291։

մանավանդ այն հավատով, որ յուր տանջանքների գնով փրկել է դահիճների ձեռքից հարյուրավոր մարդիկ և արգելք եղել մանկաժողովին, որ ամեն հայի տուն լաց ու կոծով պիտի լցներ։ Ի վերջո, երկար տառապանքներից հետո, թափում են նրա փորոտիքը և գլխիվայր կախում։ Մեռնելուց հետո էլ երկար ժամանակ դիակը թողնում են անթաղ ամայի դաշտում ընկած, մինչև որ, ի վերջո, մեծ դժվարությամբ հաջողվում է թույլտվություն ստանալ և դիակը թաղել։

Մուրացանը այս վիպակում հարազատ է մնացել ոչ միայն պատմության ոգուն, այլև պատմիչների տված շատ տեղեկություններին, որոնք, ի դեպ, հակասական չեն հիմնական հարցերում։ Սկսած Շահ-Աբբասի ասպատակությունների նկարագրություններից («Նախադրություն») մինչև 1617 և ապա 1617 թվականը, երբ տեղի են ունենում վիպակում նկարագրված դեպքերը, տրված են պատմաբանի հմտությամբ և արվեստագետի տաղանդով։ Պատմական են շատ դեպքեր ու դեմքեր՝ շահի Ագուլիս գալը, երեխաների գլուխները գերծելու հանգամանքները, քննությունը, Անդրեասի անձնազոհությունը, «հանցանք» իր վրա առնելը, նրան ազատելու համար եղած միջնորդությունները, նրա նկատմամբ գործադրված տանջանքներն ու մահը, նույնիսկ ծնողների Անդրեասին տված խորհուրդը արի ու հաստատ մնալու մասին (տե՛ս Դավրիժեցի, էջ 277)։ Պատմական է նաև շահի՝ 12 տարի առաջ Ջուղա գալու և նրա ընդունելության նկարագրությունը։ Վիպակի հերոսներից պատմական են Շահ-Աբբասը, Ամիրգունան, Շահռուխ բեկը, Անդրեասը, Խոջա-Անձրևը, Խոջա-Խաչիկը, Սառա խաթունը, կաթողիկոս Մելքիսեդեկը և մի քանի ուրիշները։ Սա, իհարկե, չի նշանակում, թե Մուրացանը պատմական փաստերն ու դեմքերը նույնությամբ է ներկայացրել։ Բանն այն է, որ նա դրանց հիման վրա վիպակ է գրել, այսինքն՝ արվեստի միջոցներով է ցույց տվել այդ բոլորը։

Լեոն, Մուրացանի պատմա-գեղարվեստական գործերը քննելով ոչ թե իբրև գեղարվեստական երկեր, այլ պատմական տրակտատներ, պահանջել է, որ հեղինակը ստրկանա պատմիչների գրած տառին, հրաժեշտ տա ստեղծագործական հնարանքին ու գրողի ֆանտազիային։ Ըստ որում Լեոն սխալվում է, նույնիսկ, իբրև պատմաբան. սխալ է բացատրում պատմությունն ու պատմիչներին։ «Տեր Անդրեասը պատմական անձնավորություն է,— գրում է Լեոն։— Առաքել պատմագիրը պատմում է, որ դա ուսուցիչ էր Ագուլիսում և Շահ-Աբբասը, տեղացի թյուրքերի մատնությամբ նահատակել տվեց նրան»[1]։

Մուրացանը «Իմ երկերի քննադատության առթիվ» հոդվածում փաստերով հերքում է իրեն, իբրև «պատմությունը կեղծողի» ներկայացված մեղադրանքները և ցույց տալիս, որ Առաքել Դավրիժեցին չի ասել, թե տեղական թյուրքերն են Անդրեասին մատնել, այլ ինքը Անդրեասն է «մատնել իրեն, կամենալով, ազատել ժողովուրդին»։

Պատմիչն ասում է, որ երբ հարցաքննության ժամանակ բոլոր ծնողները պատասխանում են, թե չգիտեն ով է գերծել երեխաների գլուխները, հարցաքննողները դիմում են Անդրեասին. «Եւ ստիպելով պահանջէին թէ ասա մեզ զի ես վերակացու մանկանցն, և դու ես գիտակ։ Իսկ տէր Անդրէասն խոկայր ի մտի, թէ զծնողսն պատճառեմ, զնոսա սպանանեն և զմանկունսն յափշտակեն. և թէ զայլ ոք պատճառեմ, զնա սպանեն, և լինի այն ինձ խիղճ մտաց և ստգտանք անփարատելի. ըստ վկայութեան սրբոյ աւետարանին թէ, լաւ է զի այր մի

[1] Լեո. Ռուսահայոց գրականությունը, Վենետիկ, 1904, էջ 282։

մեռանիցի և մի ամենայն ժողովուրդս կորիցէ. վասն որոյ լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումս. վասն որոյ ի կարի ստիպելն զինուորացն տէր Անդրէասն առ ի փրկելոյ զայլս ասաց, թէ ես եմ արարեալ զայն»[1]:

Ինչպես ցույց են տալիս այս քաղվածքը և, մանավանդ, ընդգծված բառերը, Լեոն սխալվում է, երբ ասում է, թե Դավրիժեցին գրել է, որ Շահ-Արբասը տեղական թյուրքերի մատնությամբ նահատակել տվեց Անդրեասին։ Սակայն ինչն է, որ Լեոյին շփոթության մեջ է գցել, եթե իհարկե, նա տենդենցիոզ կերպով չի այդ արել։ Երբ շահը նկատում է գերծած գլուխները, սաստիկ զայրանում է. «Այլ և արք ոմանք մահմեդական հավատով,— գրում է Դավրիժեցին,— որ։ բնիկ բնակիչք են Ագուլեաց գեղջն՝ Երևելի իշխանք, որք ընդ շահին շրջէին և մերձ նմին ի սպասու կային նորա և վասն բնական նախանձուն, զոր ունէին ընդ քրիստոնէից առաւել ևս զրգոնցին և զայրացուցին զսրտմտութիւն թագաւորին ի վերայ քրիստոնէիցն, վասն որոյ ստիպել յուզմամբ հրամայեաց շահն զննել և գտանել, որ զայն արարեալ իցեն և սպանանել»[2]։ Նախ՝ այստեղ Անդրեասին մատնելու մասին չէ խոսքը, այլ այն, որ նրանք գրգռել են շահին՝ հետաքննությամբ պարզել եղելությունը, և երկրորդ, որ այդ գրգռողները (Լեոն մատնողներ է ասում) ոչ թե «տեղական թյուրքերն» են եղել, այլ ագուլեցի «երևելի իշխանք», որ Շահի հետ էին շրջում, նրան ծառայում («մերձ նմին ի սպասու կային») և «բնական նախանձ ունեին քրիստոնյաների դեմ»։ Մի քանի էջ հետո պատմիչը հաղորդում է, որ իր կանխավ հիշածը վերաբերում է Շահռուխ բեկին. «Ոմն ի չարախոսացն ի բնակող մահմեդականացն Ագուլեաց՝ զորոց վասն հիշումն արարաք. և սորա անունն էր Շահռուխ բեկ»[3]։ Որ այս վեճի մեջ ճշմարտությունը Մուրացանի կողմն է, ցույց է տալիս հենց ինքը Լեոն՝ վիճող կողմը։ Այդ կարծիքը հայտնելուց ավելի քան 15 տարի հետո՝ 1919—1921 թվականներին գրած «Հայոց պատմության» երրորդ հատորում, առանց Մուրացանի հետ վիճելու, շարադրելով մեր ժողովրդի պատմության այդ շրջանի դեպքերը, Լեոն այդ մասին գրում է. «Անդրեաս երեցը, տեսնելով, որ ծնողները պիտի մատնվեն մահվան, վճռում է հայտնել, թե ինքն է եղել ածիլել տվողը և այդպիսով ազատել մյուսներին իր մահվան գնով»[4]։ Պատմիչի հաղորդած այս փաստի և Մուրացանի վիպակում նկարագրածի միջև տարբերություններ կա՞ն։ Այո՛։ Պատմիչի մոտ ասված է, որ դիմում են Անդրեասին և ստիպում («ի կարի ստիպելն զինուորացն»), իսկ Մուրացանի մոտ այդ չկա։ Մուրացանի վիպակում Անդրեասը սկսում է խոսել, երբ վճռում են հարցաքննել աշակերտներին, և սարսափը պատում է բոլորին, թե նրանք կրացնեն գաղտնիքը, մանավանդ որ նույնիսկ զգուշացված չեն։ Դրանով Մուրացանը հետապնդել է երկու նպատակ.

ա) Անդրեասի մեջ ավելի ընդգծել անձնազոհության մոմենտը. նա առանց հարցաքննության ու ստիպելու է իր վրա վերցնում «հանցանքը» և բ) գեղարվեստական տեսակետից ավելի համոզիչ դարձնել հարցաքննության տեսարանը։ Այն, ինչ պատմության մեջ իրրև փաստ կարող է առարկության չհանդիպել, դառնալով գեղարվեստական գործի նյութ, կարող է անհամոզիչ լինել. չէ՞ որ ամեն կատարված փաստ դեռ տիպական չէ, չէ՞ որ իսկապես համոզիչն

[1] Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, էջ 275։
[2] Նույն տեղում, էջ 274—275։
[3] Նույն տեղում, էջ 278։
[4] Լեո, Հայոց պատմություն, հատոր 3, էջ 279։

այն կլիներ, որ հարցաքննեին նաև աշակերտներին։ Շահ-Աբբասի պես խորամանկ և նենգ շահն ու նրա դրանիկները չէին կարող այնքան միամիտ լինել, որ այդ չհասկանային։

Կարող է առարկություն լինել, թե Անդրեասին հարցաքննելուց հետո կարող էին աշակերտներին հարցաքննել։ Սա հարցի էությունը չի փոխում, որովհետև եթե աշակերտները հայտնեին գաղտնիքը, այնուհետև Անդրեասին անձնազոհությունը չէր օգնի, իսկ պատմիչն ասում է, որ նա իրեն հանձնել է, որովհետև չի ուզել, որ «զայլս սպանանեն»։ Այսինքն՝ կատարելով փաստերի մասնակի փոփոխություն, հեղինակը չի խախտել պատմականությունը, ընդհակառակը, գեղարվեստորեն այն դարձրել է ավելի համոզիչ։

Լեոն ասում է, թե Մուրացանը կեղծել է պատմությունը. «Հայ քահանային,— ասում է նա,— պարսից շահի ձեռքը մատնողները թյուրքերը չեն նրա համար, ինչպես վկայում է ժամանակակից պատմիչը, այլ կաթոլիկ հայերը, Նախիջևանի դավառի ունիթոռները։ Նույնիսկ պատմությունը կեղծել՝ կրոնական մոլեռանդության տուրք տալու համար, այս բանից էլ չէ քաշվել Մուրացանը»[1]։ Ինչպես տեսանք, պատմիչը չի ասում, թե թյուրքերն են մատնել Անդրեասին, այլ ինքը՝ Անդրեասն է երեխաների գլուխները գերծելու «հանցանքը» իր վրա վերցրել։ Այժմ անդրադառնանք Լեոյի մյուս մեղադրանքին, թե Մուրացանը թյուրքերի արած մատնությունը վերագրել է կաթոլիկ հայերին, Նախիջևանի ունիթոռներին։

Քանի որ Մուրացանն ինքը պատասխանել է Լեոյի այդ մեղադրանքին, ըստ որում միանգամայն ճիշտ փաստարկումներով, մենք ցանկանում ենք այս հարցը լուծված համարել, Մուրացանի այդ առթիվ գրածը մեջ բերելով. «Լեոն յուր մեջից է հնարում այն, թե իբրև ես ցույց եմ տվել, որ Տեր-Անդրեասին մատնողները եղել են կաթոլիկ հայերը։ Պնդում եմ, որ այդ սուտ է, անխիղճ հերյուրանք... Այդտեղ ո՛չ միայն հայ կաթոլիկները չեն ունեցել մասնակցություն Տեր-Անդրեասին մատնելու գործում, այլև նրանց կարգապետ Մաթևոս Նրազմոսը և Պապի նվիրակ Մարիա Ջիտտադինին միջնորդելով շահի առաջ՝ ներում է ձեռք բերում Տեր-Անդրեասի համար այն վայրկենին, երբ նա կանգնած է լինում կախաղանի տակ։ Միայն թե Տեր-Անդրեասը չկամենալով ազատված հռչակվել ունիթոռների շնորհիվ, պատռում է ներման թուղթը և այնպես նահատակվում»[2]։

Վիպակում, իսկապես, պատկերված է, որ ունիթոռները ոչ միայն չեն մատնում Անդրեասին, այլև ուզում են ազատել նրան, սակայն վերջինս, չցանկանալով նրանց միջնորդությամբ ազատված լինել, պատռում է ներման թուղթը։

Ո՞րն է Անդրեասի և ունիթոռների այսպիսի հարաբերության պատճառը։

Ինչպես նշեցինք, մեր դրականության մեջ ասվել է, թե Մուրացանը հայ կաթոլիկների նկատմամբ հանդես է բերել կրոնական մոլեռանդություն։ Մուրացանի ստեղծագործության մանավանդ առաջին շրջանին կարելի է վերագրել նման մի բան։ Ավելի ճիշտ՝ այդ շրջանում Մուրացանը «Լուսավորչական լույս հավատի» պաշտպանության դիրքերից է հակադրվել կաթոլիկ ու բողոքական միսիոնարներին, դրանց գործունեության մեջ տեսնելով լուսավորչական «սուրբ

[1] Լեո, Ռուսահայոց դրականությունը, էջ 282։
[2] «Լումա», 1909 թ. № 4, էջ 60։

հավատի» հիմքերի խախտում։ Այդ, մասնավորաբար, արտահայտվել է նրա մի քանի հոդվածներում և «Հայ բողոքական ընտանիքը» պատմվածքում։

Օգտակար է միսիոնարների այդ քննադատությունը, մարդորսության նրանց մեթոդների մերկացումը, սակայն առաջավոր չեն հեղինակի դիրքերը։ Հետագայում Մուրացանի մոտ կատարվում է էվոլյուցիա, նա սկսում է նկատել կաթոլիկ և բողոքական միսիոնարների գործունեության քաղաքական նպատակները, հասու է լինում այն ճշմարտության, որ դա ոչ թե սոսկ կրոնական, այլև քաղաքական տիրապետության համար մղվող պայքար է։ Հենց «Անդրեաս երեց»-ի վրա աշխատելու ժամանակ Մուրացանն այդ հարցերի մասին հանդես եկավ «Մի դիտողություն» հոդվածով։ Վերջինիս մեջ, նկարագրելով հայկական ջարդերի հետևանքով ծանր վիճակում գտնվող արևմտահայերի կյանքը, Մուրացանը մերկացնում ու անարգանքի սյունին է գամում այդ ծանր վիճակը չարաշահող եվրոպական միսիոնարներին։ «Հայաստանում թրքական սուրը զարհուրելի կոտորած է անում»,— ասում է Մուրացանը, հարյուր հազարավոր հայեր զոհ են գնում թյուրքական սրին, նրանց որբերը մնում են անտեր, անտուն ու անխնամ և, ահա՛, հանդես են գալիս եվրոպական «խնամատարներ»՝ զանազան պաստորներ, պատերներ, միսսեր, միստրիսներ։ Այդ մարդորսները շարունակ խոսում են մարդասիրության ու եվրոպական լուսավորության մասին. «բայց բանից ի՞նչ է դուրս գալիս,— գրում է Մուրացանը,— այդ խնամատարները, այդ քրիստոնյա այցելուները, այդ գթության հայրերը ոչ այլ ոք են, եթե ոչ պատերազմի դաշտում «դիակ կապտողներ»։

Մուրացանը, ուրեմն, արդեն հասու է միսիոնարների գործունեության քաղաքական նպատակներին, նա հասկանում է, որ դրանք եվրոպական գաղութարարների գործակալներն են։ Միսիոնարները համոզված են, գրում է Մուրացանը, որ «որքան շատ լինի իրանց կրոնակիցների թիվը երկրագնդի վրա, այնքան ավելի հաջող կերթա իրենց սեփական գործը» («Մի դիտողություն»)։

Իսկ «սեփական գործը» ժողովուրդ ու տերիտորիա գրավելն է։ Կաթոլիկների ու բողոքականների ցանցն ընկած հայերը, ասում է Մուրացանը, խորթանում են իրենց ժողովրդին, «ազգ» և «հայրենիք» բառերը նրանց համար դառնում են «անհասկանալի հնչյուններ»։

Դրանք, շարունակում է Մուրացանը դավանափոխների մասին, «... Ոչ միայն ազգային եկեղեցուց ու զգացմունքից են օտարանում, այլև մայրենի լեզվից ու հայրենիքից» («Մի դիտողություն»)։ Իսկ ազգային զգացմունքին, մայրենի լեզվին ու հայրենիքին օտարանալը իսկապես որ հեշտացնում է օտարերկրյա նվաճողների գործը։ Չէ՞ որ դա պատմական իրողություն է և մեր գրականության առաջավոր ներկայացուցիչների (սկսած Արովյանից ու Նալբանդյանից մինչև Պարոնյան, Փափազյան, Մուրացան և մյուսները) պայքարը կաթոլիկության ու բողոքականության դեմ ուղղված էր հենց դրա դեմ։ Հայտնի է, որ Պեշիկթաշլյանը կռվել է հայ «օտարադավանների» հայատյացության, հայերեն լեզվի նկատմամբ ունեցած արհամարհական վերաբերմունքի դեմ։ Նալբանդյանը բարձր է գնահատել ա՛յն գործերը, որոնց մեջ մերկացված են կաթոլիկության ներկայացուցիչները («Ագապի» և ուրիշներ)։ Պարոնյանը, հասկանալով, որ միսիոնարները Անգլիայի նվաճողական քաղաքականության գործակալներ են, սատիրայի հզոր զենքով մերկացրել է նրանց գործունեությունը, իսկ Վ. Փափազյանը նախազգուշացնելով, որ միսիոնարները

աշխատում են հայ ժողովրդին կտրել «հայրենիքից» ու ժողովրդից, կոչ է արել կռվել բողոքականության (նա ասում է «ամերիկյան տրամադրությունների»)՝ իբրև «հարստահարության» դեմ։

Ամփոփելով իր ասածները, Մուրացանը գրում է. «... Տաճկահայաստանը ավերելու գործում հավասար ուժով են աշխատում թե՛ թյուրքի սուրը և թե՛ միսիոնարի ավետարանը»։

Հայ դրականության պատմության մեջ փորձել են այս ամենն ասնտեսել և կաթոլիկության ու բողոքականության դեմ Մուրացանի մղած պայքարը համարել ռեակցիոն, ավելին՝ նացիոնալիստական։ Այդ կարծիքն ամենայն եռանդով տարածել են, մանավանդ, վենետիկյան կաթոլիկ հայրերը և «Մշակ» թերթը։

Ի դեպ, հաճախ սխալ է դրվել այդ հարցը նաև սովետական գրականության մեջ, ոմանք կրկնել են բուրժուական գրականության մեջ արտահայտված կարծիքները և «ռեակցիոն» համարել պարսկական բռնակալության ողջ գարշելիությունն ու շահաբբասյան լծի տակ հայ ժողովրդի կրած տառապանքները պատկերող «Անդրեաս երեց» վիպակը միայն այն պատճառով, որ նրա գլխավոր հերոսը քահանա է, և մանավանդ՝ կռվում է կաթոլիկության դեմ։ Մոռացության է տրվում այն հանգամանքը, որ «բիբլիայից մարտի դասեր» քաղող Անդրեասն իր գործունեությամբ շատ քիչ է նման ստրկություն և հլու հպատակություն քարոզող հոգևորականության ներկայացուցիչներին։ Նա մերկացնում է պարսկական բռնակալությունը, «ամբարիշտ» Շահ-Աբբասին ու նրա դրանիկներին և կոչ է անում չհպատակվել պարսկական լծին, դիմադրել ու նախապատրաստել այդ լծի տապալումը։ Իսկ Անդրեասի ֆարաջա կրելու պատճառը հեղինակը բացատրել է ու մենք այդ մասին արդեն խոսել ենք։ Այժմ Անդրեասի և հայ կաթոլիկների հարաբերության հարցը։ Վերջին տարիները, մանավանդ, ճիշտ է դրվում կաթոլիկության ու բողոքականության դեմ մղած պայքարի հարցը և իրավացիորեն միսիոնարները դիտվում են իբրև Արևմուտքի գաղութարարական պետությունների գործակալներ։ Սակայն, այնուամենայնիվ, կոնկրետ հարցերը քննելիս այդ ճիշտ դրույթները հաճախ մոռացվում են։ Քննադատության մեջ, օրինակ, Անդրեասը համարվում է սոսկ հավատի նահատակ ու չի դիտվում, որ նրա և՛ մահմեդականություն ընդունելուն դիմադրելը, և՛ կաթոլիկ միսիոնարների ձեռքով ազատվելուց հրաժարվելն ու հանուն լուսավորչական հավատի զոհվելը, ըստ էության, պայքար էր մեր լեզվի, կուլտուրայի և ժողովրդի ինքնության պահպանության համար։ Շահ-Աբբասը ձգտում էր ոչնչացնել հայ ժողովրդին, մահմեդականացնել, ձուլել։ Կաթոլիկ միսիոնարներն էլ ձգտում էին տարածել իրենց հավատը, ըստ որի կաթոլիկ եկեղեցին բարձր է հայրենիքից ու ազգությունից։ Դրանով իսկ նրանք ցանկանում էին ժողովրդին նախապատրաստել արևմուտքի իմպերիալիստական պետությունների լուծը անմոռուն կերպով իրենց վզին առնելու։ Այդ նպատակով նրանք աշխատում էին հայ և անդրկովկասյան մյուս ժողովուրդներին հեռացնել ռուս ժողովրդից։ Այսպիսով, ինչպես միսիոնարների, այնպես էլ նրանց դեմ մղվող պայքարը, ըստ էության, քաղաքական պայքար էր։ Այս հարցը լուծելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նաև համանման վիճակում դտնված սովետական մյուս ժողովուրդների պատմությունը։ Ինչպես ճիշտ դիտել են «Բելոռուսական ՍՍՌ պատմություն» գրքի գրախոսները, դիսսիդենտների (այսինքն՝ ոչ կաթոլիկների) գլխավոր ուժը կազմող բելոռուսական գյուղացիության պայքարը «լինելով արտաքուստ պայքար հավատի (ուղղափառ)

համար, ոստ էության, օբյեկտիվորեն պայքար էր իր ժողովրդի, մայրենի լեզվի, արևելյան սլավոնների ընտանիքների՝ ռուս և ուկրաինական ժողովուրդների հետ ունեցած իր վաղեմի կապերի պահպանության համար»[1]։

Անշուշտ, Մուրացանը հաճախ շատ խիստ քննադատության է ենթարկել նաև «հայադավան» հոգևորականներին։ «Վերջինների մեջ էլ,— գրել է Մուրացանը,— եպերել եմ զոշաքաղության ախտը, ծուլությունն ու անգործությունը։ Ապացույց ձեզ իմ «Չհաս է» վեպը, որի մեջ հայ քահանաների մի ամբողջ խումբ, իրենց եպիսկոպոսի հետ, դուրս են բերված կարի անհամակրելի գծերով։ Նույնը չե՞մ արած և իմ «Առաքյալի» մեջ»[2]։ Դրա ապացույցն են հեղինակի նշած գործերից բացի, նաև այլ երկեր («Թե ինչո՛ւ իմ ստորագրությունը չընդունեցին», «Պսակների բողոքը» և այլն)։ Սակայն մի բան անկասկածելի է. «հայադավան» հոգևորականներին Մուրացանը քննադատում է սպասելիքներ ունեցողի դիրքերից։ Ակնհայտ հակասության մեջ մտնելով իր արած ռեալիստական մերկացումների հետ, նա այն հավատն ունի, թե հոգևորականությունը կարող է այդպես չլինել, նա պետք է ժողովրդի համար ապրի, ժողովրդի համար զոհվի։ Դա Մուրացանի մոլորությունն է «հայադավան» հոգևորականության նկատմամբ։ Նա, սակայն, այդ հավատը չունի կաթոլիկ և բողոքական հոգևորականների նկատմամբ, այստեղից էլ նրա սպանիչ քննադատությունը վերջիններիս։ Այս, սակայն, բնավ չի կարելի «կույր ֆանատիկոսություն» համարել, մանավանդ, որ Մուրացանն իր գործերի զգալի մասում ցույց է տվել կաթոլիկ ու բողոքական միսիոնարների հետապնդած քաղաքական նպատակները։

«Անդրեաս երեց» վիպակում պատկերված է, թե ինչպես՝ օգտագործելով շահաբբասյան լծի տակ ապրող հայ ժողովրդի ծանր վիճակը, ունիթոռների (հայ կաթոլիկների) կարգապետները, հենված Հռոմի պապի և Արևմուտքի մի քանի պետությունների ուժի վրա, պառակտում են ժողովրդին, իրենց ներկայացնում իբրև տառապած քրիստոնյաների հովանավորներ։ Մանկաժողովի ժամանակ նրանք սարսափահար հայերին առաջարկում են իրենց հայտարարել ունիթոռներ և ազատել որդիներին մանկաժողովից։ Վիպակում ունիթոռների ղեկավար հայր Պողոս Զիտտադինին հանդես է գալիս իբրև «նվիրակ սրբազան պապի և... դեսպան Ֆրանկի և Սպանիո թագավորության»։ Նրան Շահ-Աբբասն ընդունում է «մեծամեծ պատվով» և տալիս է զանազան արտոնություններ։ Անդրեասին կախաղան բարձրացնելուց ազատելու համար հայերի բազմաթիվ դիմումներն ու խնդիրները մերժվելուց հետո, հայր Զիտտադինին բերում է ներման մասին Շահ-Աբբասի հրամանը։ Կաթոլիկների ղեկավարներն ուզում են ազատել իրենց ամենից խելոք ու անողոք թշնամուն՝ Անդրեասին, ցանկանալով ցույց տալ, թե այն, ինչ չկարողացան անել բոլոր հայերը, ի վիճակի են անելու կաթոլիկների դործակալները։ Դրանով իսկ նրանք ցանկանում են բարձրացնել իրենց հեղինակությունը և թշվառ վիճակում գտնվող ժողովրդին թեքել դեպի «հզոր գահակալների» հովանավորությունը վայելող կաթոլիկ համայնքը։ Անդրեասը մերկացնում է այդ մեքենայությունը, պատռում է շահի ներման թուղթը և կախաղան բարձրացվում[3]։

---

[1] Ժուռնալ "Коммунист", 1954 թ., № 16, էջ 120։

[2] «Լումա», 1909, № 4։

[3] Անդրեասը գոհվում է, իր մահվամբ պերճախոս կերպով հաստատելով այն ճշմարտությունը՝ թե անհրաժեշտության դեպքում պետք է անձը զոհել հանուն հայրենիքի։

Լեոն այս փաստերը նկատի ունենալով, պնդել է, թե Մուրացանը կեղծել է պատմությունը և հանդես բերել կրոնական մոլեռանդություն։ Հարցը պարզելու համար դիմենք Լեոյի «Հայոց պատմության» երրորդ հատորին։ Այդտեղ մեզ հետաքրքրող խնդրի կապակցությամբ բազմաթիվ արժեքավոր փաստեր են բերված այն տմենի մասին, ինչ ասված է Մուրացանի վիպակում։ Ե՛վ այն, որ եվրոպական պետությունները հովանավորում էին կաթոլիկներին (էջ 325)[1], և՛ այն, որ կաթոլիկները պրոպագանդում էին ունիթոռ դառնալ ու անցնել Արևմուտքի հզոր տերությունների «հովանավորության» տակ (էջ 330—331)։

Ավելին, Լեոն բերում է փաստեր, որոնք ցույց են տալիս, որ կաթոլիկները ձգտում էին «գրգռել շահին ոչ կաթոլիկ հայերի դեմ, որպեսզի նա բռնությամբ հարկադրի նրանց հպատակվել Հիսուսի Քրիստոսի տեղապահին» (շահին — Վ. Պ.) (էջ 332)։

* * *

Ասացինք, որ հարցաքննության տեսարանում Մուրացանը որոշ պատմական փաստեր փոփոխել է, և դրանից վիպակը շահել է։ Այժմ շարունակենք ուսումնասիրությունն այդ ուղղությամբ և քննենք մյուս փոփոխությունները։ Տեսնենք, թե Մուրացանը ուրիշ ի՛նչ փոփոխությունների է ենթարկել պատմական փաստերը և ի՛նչ նպատակով։

Պատմությունից հայտնի է, որ Օքուզ Ահմեդ փաշան 1617 թվականին պաշարում է Երևանի բերդը, սակայն երկու և կես ամսվա մարտերից հետո, վերացնում է պաշարումը և հեռանում. «Զկնի դառնալոյ սարդարին,— գրում է պատմիչը,— շահն ևս դարձաւ յԵրևանայ և գնաց ի Նախչուան, և անտի յԱգուլիս, արդ այսու պատճառաւ եկն շահն յԱգուլիս»[2]։ «Շահն չուեալ ի Նախչուանայ,— գրում է պատմիչը մի այլ տեղ,— գնաց ի գիւղաքաղաքն Ագուլիս»[3]։

Մուրացանն այս փաստը և նրան տված մեկնաբանությունը որոշ փոփոխության է ենթարկել։ Վիպակում շահը Նախիջևան չի գնում։ Լսելով Շահրուխ բեկին, թե Ագուլիսումն են «գեղեցիկ տղաներն ու աղջիկները», նա փոխում է իր մտադրությունը և որոշում Նախիջևանի փոխարեն գնալ Ագուլիս։ Լեոն ասում է, որ «1617 թվին Շահ-Աբբասը, որ, ինչպես տեսանք, պատերազմական գործողությունների էր գնացել օսմանցիների դեմ Նախիջևանի մոտ, այցելեց

ազատության ու սեփական ժողովրդի ինքնության։ Այս տեսակետից նայելով հարցին, չի կարելի համաձայնել սովետական շրջանի գրականության մեջ հայտնված այն կարծիքի հետ, թե Անդրեասի «բնությունը» մեջ Մուրացանը մի կետում սայթաքել է, նրան դարձրել է փոխրոգի «մահից առաջ, չկամենալով կաթոլիկների ձեռքով ազատվել մահից»։ Կարելի է միայն ցավել, որ այս կարծիքը արտահայտել է Մուրացանի ստեղծագործության արժեքավորման ու մարքսիստական դնահատության գործում շատ մեծ ծառայություններ ունեցող պրոֆեսոր Ա. Տերտերյանը։

[1] Լեոն նշում է նաև, որ Շահ-Աբբասի կազմակերպած մեծ գերեվարության ժամանակ Նախիջևանի դավառի ունիթոռները Արաքսի մյուս ափից ետ վերադարձան «ֆրանկների» դեսպանի միջնորդությամբ (257, 325)։

[2] Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, էջ 274։

[3] Նույն տեղում, էջ 165։

Ագուլիս»[1]։ Նա չի ասում Շահ-Աբբասի Ագուլիս գնալու պատճառը։ Պատմիչը (Դավրիժեցին) նույնպես միայն արձանագրում է փաստը, թե շահը գնաց Նախիջևան և այնտեղից Ագուլիս։

Վիպակում Մուրացանը փորձել է ավելի համոզիչ ձևով ներկայացնել շահի Ագուլիս գնալու հանգամանքը։ Շահի՝ «Ագուլիսի նման չոր ու մերկ սարերով պատած մի ձորակում» մնալը բացատրված է նրանով, որ Ագուլիսը «խաս» (արքունական, հարկից ազատված) լինելով, ազատ է մնացել մանկաժողովից և ունի շատ գեղեցիկ աղջիկներ ու տղաներ, որոնք կարող են խանի հարեմը զարդարել։ Շահ-Աբբասի համար, սակայն, քմահաճույքի գործ է մանկաժողով անել նաև «խաս» հայտարարված Ագուլիսում։ Ի դեպ, պատմիչի մոտ բացարձակ խոսք չկա նաև մանկաժողովի մասին, սակայն նրա մի քանի ակնարկների հիման վրա Մուրացանն արել է այդ հավելումը։ Առաքել Դավրիժեցին ասում է, թե Շահ-Աբբասը դիտում էր իրեն դիմավորող թափորը. «ըստ չարայուշ մտաց և բարոյից յուրոց քննէր զամենեսեանն»։ Ապա պատմելով, թե ինչպես շահը բարկանում է և կարգադրում հարցաքննություն սկսել Անդրեասի աշակերտների գլուխների գերծման գործով, պատմիչը ավելացնում է. «Համարեցաւ, թէ վասն ինքեան արարեալ իցեն զայն. որպէս զի մի՛ վայելչագեղ երեսցին մանկունսն յաչս նորա և հաճեալ ի նոսա առցէ ի նոցանէ»[2]։

Թափորը զննելու առթիվ արված ակնարկը և ընդգծված բառերը տրամաբանորեն անկասկած են դարձնում մանկաժողովի փաստը։

Ստեղծագործական հնարանքի արդյունք է նաև երեխաների գլուխները սափրելու և գոնջ հիվանդությամբ վարակելու պատմությունը։ Դավրիժեցին ասում է, որ շահը «ետես զի ածելեալ էին կուլակք մանկանցն և այն յոյժ ծանր ու դժուարին թուեցաւ ինքեան»[3]։ Այստեղ ոչ մի բառ չկա այն մասին, թե երեխաների գլուխները վարակված են եղել գոնջ հիվանդությամբ։ Չի ասված նաև, թե ինչու են սափրված։ Այդ հանգամանքին տարբեր բացատրություններ են տրվել։ Վերջերս տպագրված պատմական մի կարևոր հետազոտության մեջ այն կարծիքն է հայտնված, թե դպրոցում «գործադրվում էր երեխաների մազերի կտրում (որի պատճառով դպրոցականները «տգեղ» էին երևում»)[4]։ Մենք այդ բացատրությունը սխալ ենք համարում։ Եթե երեխաների մազերը սափրված լինեին ըստ ընդունված սովորության, դա չէր կարող շահին այդ աստիճան զայրույթ պատճառել, նրան մտածել տալ, թե՝ իրենից չխլվելու համար են այդ տրել։ Շահին կհամոզեին, Անդրեասը և աշակերտների ծնողները հարցաքննության ժամանակ կասեին այդ մասին և դիտավորության մոմենտը կժխտվեր։ Մեզ թվում է, Պ. Հարությունյանին թյուրիմացության մեջ է գցել Չամչյանի գրածը։ Չամչյանը, վերցնելով Դավրիժեցու այն բացատրությունը, թե Շահ-Աբբասը մտածեց («զի համարեցաւ»), որ իրենից չխլվելու համար են տգեղացրել երեխաներին, իր կողմից ավելացնում է, թե սխալ են եղել շահի կասկածները. «տարուբերեալ յայլևայլ խորհուրդս,— գրում է նա,— ի բիր կարծիս եղև թէ հայք ի պատճառս իւր տգեղացուցեալ իցեն զմանկունսն»[5]։

---

[1] Լեո. Հայոց պատմություն, հատոր 3, էջ 27։

[2] Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, էջ 274։

[3] Նույն տեղում։

[4] П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, Москва, 1954, стр. 119.

[5] Մ. Չամչյան, Հայոց պատմութիւն, հատ. 3, էջ 590։

Ուրեմն, Չամչյանն ասում է, թե Շահ-Աբբասը սխալվել է («ի թիւր կարծիս եղև») իր կարծիքների մեջ։ Փաստորեն նույնն է ասում նաև Պ. Հարությունյանը՝ շահը սխալվել է, դիտավորություն փնտրելով, որովհետև ընդունված է եղել («գործադրվել» է) երեխաների մազերը «խուզել»։

Միակ ճիշտ բացատրությունը Մուրացանի տվածն է։ Պատմությունից հայտնի չէ, որ հայերի մեջ սովորություն եղած լինի երեխաների գագաթները («կուլակք») սափրել և մանավանդ այն հանգամանքը, որ չի ասվում ու ապացուցվում հայերի, որպես թե, այդպիսի սովորություն ունենալու մասին, ցույց է տալիս, որ Մուրացանը միանգամայն տեղին ու սրամիտ կերպով բաց է արել պատճառը, խոսեցրել է պատմիչին այնտեղ, որտեղ նա լռել է։ Ահավորագույն շահը սուր աչքերով գեղեցիկ աղջիկներ ու տղաներ է փնտրում իր զազիր կրքերին զոհ դարձնելու համար, բնական է, որ ժողովուրդը տգեղացներ գեղեցիկներին։ Մուրացանը ավելացրել է նաև արհեստական գոնջ առաջացնելու պատմությունը և դա միանգամայն հասկանալի է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ «այդ հիվանդությունը սաստիկ տարածվող է»։

Մուրացանը լավ իմանալով մեր ժողովրդի պատմությունը և ունենալով ստեղծագործական ուժեղ ֆանտազիա, երևակայության ուժով ստեղծել է բազմաթիվ դեպքեր, դեմքեր, առաջ է բերել պատճառներ, որոնք չկան պատմական աղբյուրներում, բայց որոնք խորապես պատմական, ուրեմն և ռեալիստական են, չեն հակասում ժամանակի ոգուն և օրգանապես միահյուսվում են պատմական իրադարձություններին։

«Անդրեաս երեց»-ի մեջ ստեղծագործական հնարանքի արդյունք է նաև Շահռուխ բեկ — Վարդենի, Շահռուխ բեկ — Անդրեաս և Շահռուխ բեկ — Ամիրգունա հարաբերությունների պատմությունը։ Ըստ պատմական աղբյուրների, Շահռուխ բեկը շահին գրգռում է, որ սա կարգադրի՝ պարզել Անդրեասի աշակերտների գլուխները գերծելու հանգամանքները։ Մեկ էլ Անդրեասի մահվանից երեք-չորս ամիս հետո, երբ խոսք է բացվում Անդրեասի մասին, Շահռուխ բեկն ասում է, որ նա աշակերտների գլուխները գերծել էր Մովսես վարդապետի խորհրդով՝ «խրատով վերակացուին յուրո»։ Վիպակում Շահռուխ բեկին ավելի դեր է տրված։ Մուրացանը փորձել է տիպական հանգամանքների մեջ դնելով, գեղարվեստորեն համոզիչ դարձնել Շահռուխ բեկի՝ իբրև պարսկական բռնակալական սիստեմի ներկայացուցչի ողջ գարշելիությունը, այդ պատճառով նա սրել է Շահռուխ բեկ — Անդրեաս հարաբերությունը և աշխատել գեղարվեստական հնարանքի միջոցով ցույց տալ այդ լարված հարաբերությունների պատճառները։ Դրա համար Մուրացանին չի բավարարել Առաքել Դավրիժեցու բացատրությունը, թե պատճառը նրա՝ դեպի քրիստոնեական ազգն ու հավատը ունեցած «բնական նախանձն» ու նենգությունն էր։ Պատմությունից վերցնելով այն փաստը, որ Շահռուխ բեկը ագուսեցի է, եղել է այնտեղի վերակացու, Մուրացանն այդ վերակացուի մեջ դրել է պարսկական բռնակալության ցերբերների բնորոշ գծերը, դրանով իսկ նրան դարձնելով Շահ-Աբբասի պետական սիստեմի տիպիկ ներկայացուցիչներից մեկը։

Շահռուխ բեկը Ագուլիս գյուղաքաղաքի վերակացու եղած ժամանակ, ասում է Մուրացանը, հար ու նման պարսիկ մյուս բռնակալների, «կեղեքում էր տեղացի հայերին ոչ միայն նյութապես, այլև բարոյապես։ Վերջին տեսակի ամբարշտությունը նա երբեմն հասցնում էր այնտեղ, որ հափշտակում էր հա-

յոց ընտանիքներից գեղեցկուհիներ, պատճառ բերելով, թե՝ հրաման ունի Սպահանից կանայք հայթայթելու շահի հարեմի համար»[1]։

Մի անգամ էլ նա, ֆառաշների օգնությամբ, փորձում է հափշտակել գեղեցիկ Վարդենիին։ Բայց Անդրեասը, որ սիրում է նրան, խանգարում է այդ հափշտակությունը, կռվի մեջ մտնելով և Շահռուխի այդ արարքի դեմ ոտքի հանելով հարևան թաղերի բնակիչներին։ Այնուհետև հիմք է դրվում Շահռուխ բեկի ու Անդրեասի թշնամության, որը և պատճառ է դառնում, որպեսզի Շահռուխը շահի մոտ չարախոսի Անդրեասին և այնուհետև անձամբ Անդրեասի նկատմամբ գործադրի ամենադաժան պատիժներն ու բռնությունները։

Մուրացանը վարվել է մեծ արվեստագետի նման. այս հավելումով նախ նա հնարավորություն է ստեղծել ծավալելու վիպակի գործողությունները մինչև Շահռուխի սպանությունը՝ Վարդենիի ձեռքով և ապա՝ միանգամայն համոզիչ է դարձրել Անդրեասի ու Շահռուխի անձնական թշնամության հանգամանքները։ Մուրացանը հրաժարվել է պատմիչի այն բացատրությունից, թե Շահռուխը, իբրև մահմեդական, «բնական» նենգություն ու նախանձ է տածել քրիստոնյաների նկատմամբ։ Մուրացանն ավելացրել է նաև Շահռուխ բեկի սպանության պատմությունը։ Հայտնի է, որ նա սպանվել է Անդրեաս երեցի մահվանից ամիսներ հետո «սրով ի զորականաց շահին»։ Մուրացանի մոտ նրան սպանում է Վարդենին։ Որքան էլ ռոմանտիկական լինեն այն հանգամանքները, որոնց մեջ կատարվում է այդ ակտը (զգեստափոխ լինելը, սրտի տեղը ուրիշից հարցնելուց հետո մի հարվածով սրտին հարվածելը, սպանելուց հետո աննկատ հեռանալը և այլն), մի բան, սակայն, անկասկած է. այդ բոլորն արված է այն նպատակով, որպեսզի ցույց տրվի, որ չարը պետք է պատժվի, որ ժողովուրդը հոտ չէ, ինչպես կարծում է Շահ-Աբբասը. «Եթե մի տկար հայուհի կարողանում է հաղթանդամ Շահռուխին ոչնչացնել,— ասում է Ամիրդունեն շահին,— ապա շատ զորավոր հայեր կարող են ուրիշ շատ բաներ անել։ Չպետք է ուրեմն մենք նրանց համբերությունը սպառենք։ Ժողովրդի հուսահատությունից առաջանում է հեղեղ, որ տապալում է ամենազորավոր ամբարտակներն անգամ»[2]։

---

[1] Մուրացան. Երկասիրություններ, հատոր 2, էջ 192։

[2] Նույն տեղում, էջ 374։